

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. <<Save the Children>> կազմակերպություն և Բաց հասարակության ինստիտուտ - <<Միավորվենք հանուն երեխաների, փրկենք ապագան>> ծրագրի շրջանակներում <<Երեխաների պաշտպանությունը բռնություններից>> դասընթացների կազմակերպում, երեխաների իրավունքների պաշտպանության աշխատանքային 2 խմբերի ստեղծում Բյուրեղավան և Աբովյան քաղաքներում՝ համապատասխան գիտելիքների տրամադրում 20 հոգուց բաղկացած բազմամասնագիտական խմբին: **2011-2013թթ.**
2. ՀՕՖ-ի <<Երեխաների աջակցության կենտրոն>> հիմնադրամ և Բաց հասարակության ինստիտուտ - <<ՀՀ Կոտայքի մարզի երեխաների աղքատության կանխարգելում>> ծրագրի իրագործում, որի շրջանակներում մարզի 15 համայնքներում իրականացվել է 124 ընտանիքների ուսումնասիրություն, կարիքի գնահատում և ընտրվել են 51 սոցիալապես անապահով ընտանիքներ՝ հասցեական օգնություն ցուցաբերելու նպատակով ու ևս 10 ընտանիքներ՝ խորհրդատվական, ուղղորդման աշխատանքներ իրականացնելու նպատակով: **2007-2013թթ.**
3. Միավորված ազգերի փախստականների գծով հայաստանյան գրասենյակ և <<Սեյվ դը Չիլդրեն>> կազմակերպություն – նպատակն է մարզում բնակվող փախստական ընտանիքների իրավիճակի ուսումնասիրություն, անչափահաս երեխաների տվյալների հավաքագրում, սոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպում և անցկացում: **2012թ.**
4. Չեխական <<People in need>> կազմակերպություն և <<Հույս և օգնություն>> ՀԿ – ծրագրի նպատակն է տեղեկատվության արդյունավետության բարձրացման և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով ՀՀ-ում երեխաների թրաֆիկինգի կանխարգելման համախմբված և հզորացված համակարգի ստեղծում, <<Երեխաների թրաֆիկինգի կանխարգելում և աջակցության կազմակերպում, երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների հմտությունների և կարողությունների զարգացում>> սեմինարի կազմակերպում: **2011-2012թթ.**
5. ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ և իտալական <<Էդուքեյթ>> ՀԿ-ի կողմից կազմակերպված համատեղ սեմինար - նպատակն է աջակցություն ցուցաբերել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացում և Հայաստանում սոցիալական պաշտպանության ծառայությունների բարեփոխմանը: **2007-2013թթ.**
6. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ - <<Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում>> եռամյա ծրագրի նպատակն է ստեղծել գենդերային բռնությունների նվազեցմանը նպաստող միջավայր և օժանդակել այս դաշտում միջազգային պարտականությունների իրականացմանը: Յուրաքանչյուր տարի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում իրականացվում է <<16 օրյակ ընդդեմ գենդերային բռնության>> քարոզարշավի կազմակերպում: **2009-2012թթ.**